ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12, 1956 Общественные науки

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈՎԵՏԱՀԱՅ ԱԿԱՆԱՎՈՐ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Դ. Դեմիրճյանը և Ստ. Զորյանը մեր ժամանակաշրջանի նշանավոր արձակագիրներից են։ Որպես սովետահայ արձակի ականավոր վարպետներ, նրանք հայ գրականության պատմության մեջ խոշոր ու անգնահատելի գեր ունեն։ Դրենց ստեղծած մի շարք բարձրարժեք գեղարվեստական երկերով նրանք հարստացրել են մեր գրականությունը սովետական շրջանում, դառնալով նրա առաջատար դեմքերը։ Դ. Դեմիրճյանի և Ստ. Զորյանի ստեղծագործությունների ուսումնասիրությունը չափազանց կարևոր է սովետահայ գրականության գիտական պատմության ստեղծման գործում։ Այս տեսակետից գրական պետք է գնահատել Հայկական ՍՍՌ ԳԱ Գրականության ինստիտուտի կողմից հրատարակված Հր. Մուրադյանի «Դ. Դեմիրճյան» և Ս. Աղաբաբյանի «Ս. Զորյան» աշխատությունները։

Սովետահայ մեծատաղանդ գրող Դերենիկ Դեմիրճյանի մասին գրված են մեծ թվով գրականագիտական աշխատություններ, գրախոսություններ, հոդվածներ, առանձին ծավալուն ուսումնասիրություններ։ Նրա գրեթե բոլոր ստեղծագործությունները, սկսած նախառևոլյուցիոն շրջանի առաջին պատմվածքներից («Իդեալիստը», «Ջութակն ու սրինգը») մինչև վերջին շրջանի գործերը դարձել են քննադատության ու գրականագիտության բանավեճերի առարկա։

Դեմիրճյանի ստեղծագործության վերաբերյալ եղած հարուստ գրականությանը եկավ ավելացնելու, ահա Հրայր Մուրադյանի «Դերենիկ Դեմիրճյան» աշխատությունը։ Այդ գործը մի արժեքավոր ուսումնասիրություն է, որտեղ մանրամասն վեր է հանված հեղինակի ավելի քան 60-ամյա գրական-ստեղծագործական կյանքի բեղմնավոր աշխատանքը, հանգամանորեն վերլուծության են ենթարկված նրա գրեթե բոլոր գեղարվեստական գործերը։ Դեմիրճյանը բազմաժանր գրող է. նա զբաղվել է գրական համարյա բոլոր ժանրերով՝ պոեզիա, արձակ, դրամատուրգիա, հրապարակախոսություն։ Այդ ժանրերում ևս հեղինակը բազմազան է, հարուստ և որոնող։ Պոեզիայի բնագավառում նա ստեղծել է լիրիկական բանաստեղծություն, պոեմ, քառյակ, առակ և այլն։ Արձակի մեջ՝ պատմվածք, նովել, մեծածավալ վեպ, վիպակ, մանրապատում, ակնարկ, գրույց և այլն։ Դրամատուրգիայի բնագավառում նա ստեղծել է կոմեդիա և դրամա։

Գրքում համառոտ ներածականից հետո հեղինակը անցնում է Դեմիրճյանի նախառևոլյուցիոն շրջանի ստեղծագործությունների քննարկմանը, որոնց իսկական արժեքը իր ժամանակին վեր չի հանված քննադատության կողմից։ Ոչ միայն այդ, այլ ընդհակառակը։ Այդ շրջանի գործերը դիտելով որպես գրական խորթ ուղղությունների, անկումային տրամադրությունների արձագանքներ, գրականագիտությունը արժեքազրկել է դրանց գաղափարական կողմը, կենսական բովանդակությունը և միայն վերապահությամբ է ընդգծել դրանց գեղարվեստական արժանիքները։ Հեղինակը գտնելով վաղ շրջանի այդ գործերի բովանդակության դեմոկրատական տարրերը, դրանք կապում է քննադատական ռեալիզմի տրադիցիաների հետ ու ցույց տալիս այդ ստեղծագործությունների կենսական առողջ բովանդակությունը։

Դեմիրճյանի վաղ շրջանի ստեղծագործությունների հերոսը, իհարկե, պատմություն կերտող ժողովրդի առաջամարտիկը չէ։ Այդ շրջանի նրա պոեզիայի համար բնորոշ էին վշտի և հուսահատության տրամադրությունները։ Իրականությունից դժգոհ բանաստեղծը ձգտում էր հասկանալ կյանքում տիրող անարդարության, չարիքի, մարդկային վշտի պատճառները, բայց նրա այդ ձգտումը արտահայտվում էր վերացական, մեծ մասամբ սիմվոլիստական պատկերների միջոցով։

Դեմիրճյանի պոեզիայում առանձնահատուկ տեղ է գրավում «Լենկ-Թեմուր» պատմական պոեմը, որի համար նյութ է ծառայել 14-րդ դարում Հայաստան կատարած արևելյան բռնակալի արշավանքը։ Հեղինակը հանգամանալի վերլուծության է ենթարկում պոեմը իր բոլոր

գործերով և ցույց տալիս, որ պոեմի հիմնական նյութը ժողովրդի անմահության գաղափարն է։ Որքան էլ բռնակալները անհաղթ ու դաժան լինեն՝ կվերանան իսպառ, իսկ ժողովուրդը կապրի. կյանքի նրանց ավերածության հետքերը և կրկին կվերականգնի ընդհատված կյանքը։

Անցնելով Դեմիրճյանի վաղ շրջանի պատմվածքների քննությանը, գրքի հեղինակը ցույց է տալիս, որ անվանի արվեստագետը իր հերոսների անուրախ կյանքը փոխելու միջոցներ չի առաջարկում. սակայն պատկերելով գավառական հետամնաց քաղաքի, գյուղի ու մարդկանց կյանքի գորշությունը, ցույց տալով նրանց զգացմունքների ու երազանքների անսահմանափակությունը, նա օբյեկտիվորեն դատապարտում է մեղավորներին, կյանքի գոհերի պաշտպանության դիրքերից խփում է կյանքի տերերին։

Այնուհետև քննության առնելով Դեմիրճյանի՝ առաջին համաշխարհային պատերազմի շրջանում գրված պատմվածքները, հեղինակը մանրամասն վերլուծության է ենթարկում դրանք։ Այդ շրջանում գրված պատմվածքներից գրքում մանրամասն վերլուծության են ենթարկված «Միայն մեկը», «Ավելորդը», «Ստամոքսը», «Տերտերը» և այլ հանրածանոթ գործեր։ Հեղինակը ճիշտ է վարվել, հատուկ ուշադրություն դարձնելով վերոհիշյալ գործերի վրա, որովհետև այդ պատմվածքներում Դեմիրճյանն արծարծում է ժամանակի համար շատ բնորոշ և գաղափարական ու սոցիալական մեծ նշանակություն ունեցող հարցեր։

Թոթափելով իր բանաստեղծություններին հատուկ հոռետեսական, անկումային տրամադրությունները, այստեղ արդեն արձակի մեջ Դեմիրճյանը դրսևորում է մարդկային փոխհարաբերությունների ու հոգեբանության նուրբ իմացություն։ Այդ ժամանակաշրջանում գրված նրա ստեղծագործությունների ուղին դա ռեալիզմին հակվելու և աշխատավոր ժողովրդին ավելի մոտենալու ուղին էր։ Նրա ստեղծագործության մեջ երևան եկան ժողովրդի ու հայրենիքի թեմաները և նոր ուժով արտահայտեցին սերը դեպի մարդը։ Դեմիրճյանը այս մանր պատմվածքներում կարողացել է հասնել առօրյա երևույթների գեղարվեստական մեծ ընդհանրացման։

Խոսելով 20-ական թվականների 2-րդ կեսին վերաբերող ստեղծագործությունների մասին, աշխատության հեղինակը մանրամասն ցույց է տալիս, որ եթե սովետական առաջին տարիներին Դեմիրճյանը թեմատիկայի ասպարեզում դեռևս չէր ազատագրվել անցյալի վերապրուկներից, ապա այդ ժամանակ նա վճռական բեկում կատարեց դեպի սովետական թեմատիկան։ Նրան բնորոշում է նոր մարդը, անցյալում հնչված և արհամարհված աշխատավորը, որն սկսել էր ըմբռնել նոր կյանքի իմաստը, հասկանալ կյանքի տեղաշարժերը, ձգտելով նոր իրավակարգում գրավել այն տեղն ու դերը, որպիսին պատմությունը հատկացրել էր նրան նոր հասարակության մեջ։ Այդ շրջանի նրա ուշագրավ երկերից են «Հանգստի տանը», «Մերկե», «Մաթոն» և այլ ստեղծագործություններ։

Աշխատության հեղինակը ճիշտ վերլուծության է ենթարկում նաև Դեմիրճյանի մյուս երկու նշանավոր գործերը՝ «Ռաշիդ» և «Նիգյար» վիպակները, որոնց հերոսները նոր մարդիկ են։ Նրանք ոչ թե հին կյանքի, հին սկզբունքների հետ համակերպվողներ են, այլ այդ կյանքը վերափոխողներ, սոցիալիստական ռևոլյուցիայի առաջամարտիկներ։

Անցնելով Դեմիրճյանի սովետական շրջանի դրամատիկական երկերին, Հր. Մուրադյանը վերլուծության է ենթարկում դրանք, բացահայտելով այդ գործերի թերություններն ու առավելությունները։ Հեղինակը կանգ է առնում հատկապես «Քաջ Նազար», «Երկիր հայրենիք», «Կապուտանը» և այլ գործերի վրա։ Ելնելով իր հայրենի երկրի ոչ հեռավոր անցյալի կոնկրետ իրողություններից, հեղինակը ցույց է տալիս, որ Դեմիրճյանը «Քաջ Նազար» կատակերգության մեջ այն կտավի վրա լուսաբանում է դասակարգային հասարակության մեջ ժողովրդի և պետության փոխհարաբերության հարցն ընդհանրապես, կատարելով փիլիսոփայական և բաղարական մեծ ընդհանրացումներ։

Աշխատության նախավերջին գլուխը նվիրված է Հայրենական պատերազմի շրջանում գրված գործերին, դրանց մեջ և «Վարդանանք» պատմավեպին։ Այստեղ Մուրադյանը ճիշտ վերլուծության է ենթարկում «Վարդանանք»-ը, ցույց տալով, որ Հայրենական պատերազմի ժամանակաշրջանում սերը Հայրենիքի նկատմամբ դարձավ մեր գրականության լեյտմոտիվը։ Հեղինակը գտնում է, որ «Վարդանանք» պատմավեպում արտահայտված Դեմիրճյանի պատմափիլիսոփայությունը հանգում է այն բանին, որ շինարար և պայքարունակ ժողովուրդը ապրող ժողովուրդ է, և որ վեպի հերոսը հանդիսացող այդ ժողովուրդը ակտիվ և գիտակից այն ուժն է, որ պատմություն է կերտում։

Աշխատության վերջին գլուխը նվիրված է հետպատերազմյան շրջանի այն ակտուալ թեմաներին, որոնց անդրադարձել է Դեմիրճյանը։

Հր. Մուրադյանի աշխատությունը գրված է ջանասեր գրականագետի գրչով։ Դիրքը

լագրված է հստակ ու հարուստ լեզվով, պատկերավոր ու գրավիչ ոճով։ Ելնելով առիթից, անհրաժեշտ ենք համարում նշելու գրքի հետևյալ թերությունները։ Հր. Մուրադյանը շատ քիչ է խոսում Դեմիրճյանի արվեստի առանձնահատկությունների մասին և խոսելիս էլ բավարարվում է կցկտուր բնութագրումներով։ Արժանի ուշադրություն չի դարձվել Դեմիրճյանի ստեղծագործությունների գեղարվեստական առանձնահատկությունների վրա։

Ներկա մենագրությունը, որպես գրականագիտական հաջող ուսումնասիրություն մեր սրբերի մեծաղույն ստեղծագործողներից մեկի մասին, արժանի է գրական դնահատականի։

* *
*

Սովետահայ գրականության մյուս ականավոր վարպետի ստեղծագործության ուսումնասիրությանն է նվիրված Ս. Աղաբաբյանի «Ստեփան Զորյան» մենագրությունը։ Հեղինակը այդ աշխատության մեջ Ստ. Զորյանի ստեղծագործությունը քննարկում է մեր կյանքի զարգացման տարբեր ժամանակաշրջանների հետ ունեցած կապի տեսանկյունից, բոլոր դեպքերում էլ տալով հիմնականում ճիշտ մեկնաբանություն։ Հենվելով Զորյանի գրական ժառանգության վրա, նա ցույց է տալիս, որ գրողը անցել է երկար ու բովանդակալի ուղի։ Հաղթահարելով ստեղծագործական ճանապարհի խոչընդոտները ու արգելքները, նա կարողացել է ստեղծել գրական մեծ ու արժեքավոր ժառանգություն։

Անդրադառնալով Զորյանի ստեղծագործական բեղմնավոր ուղուն և գրական գործունեության բազմամյա պատմությանը, հեղինակը նրա արվեստն անխզելիորեն կապում է հայ աշխատավոր ժողովրդի հետ, նրան համարելով հասարակ մարդկանց իղձերի ու ձգտումների արտահայտիչը, ցույց տալով, որ նա իր ստեղծագործությամբ կանգնած է եղել հայ կլասիկ գրականության ռեալիստական տրադիցիաների պաշտպանության դիրքերում և հանդիսացել է այդ գրականության հետևորդներից ու զարգացնողներից մեկը։

Համառոտ ներածականից ու կենսագրական տեղեկություններից հետո, մենագրության հեղինակը կանգ է առնում նրա նախաոկտոբերյան շրջանի ստեղծագործությունների վրա։ Այդ շրջանի գործերի արժեքը ժամանակին վերջ չի հանված քննադատության կողմից։ Նախասովետական շրջանի երկերը քննարկելիս, գրքի հեղինակը գտնում է, որ այդ գործերի գլխավոր ուղղությունն ու տենդենցը ոչ միայն ժամանակի, իրականության վրա գրողի քննադատական հայացքն է, բուրժուական միջավայրի մերկացումը, աշխատավոր ժողովրդի տառապանքի ու տանջանքի երևան հանումը, այլև «խավարի թագավորության» դեմ աշխատավոր մարդու բմբոստացումը, նրա արդարացի բողոքը սոցիալական կյանքի հիմքերի դեմ, ազնիվ ձգտումն ու իղձերը՝ շահագործման ճիրաններից մարդու ազատագրման համար («Տխուր մարդիկ»)։ Հակադրվելով այն գրականագետներին, ովքեր արժեքազրկել են Զորյանի ստեղծագործության գաղափարական կողմը, համարելով նրան սոսկ լուսանկարիչ, արձանագրող, պասսիվ, Աղաբաբյանը ընդգծում է նրա արվեստի խորապես ակտիվ բնույթը։ Մանրամասն քննության ենթարկելով գրողի՝ իմպերիալիստական պատերազմի թեմայով գրված պատմվածքները, նա կանգ է տալիս հատկապես «Պատերազմ» և «Ջրհորի մոտ» հանրածանոթ գործերի վրա, գործեր, որոնք արծարծում են ժամանակի համար շատ բնորոշ և սոցիալական ու գաղափարական մեծ նշանակություն ունեցող հարցեր։

Անցնելով Զորյանի սովետական շրջանի ստեղծագործությունների անալիզին, մենագրության հեղինակը ցույց է տալիս, որ նոր թեմատիկան, պատմական նոր ժամանակաշրջանի պատկերումը լական փոփոխություններ մտցրին նրա ստեղծագործական մեթոդի մեջ։ Այդ շրջանի ստեղծագործության բնորոշ առանձնահատկությունն են կազմում նոր մարդու կերպարի ստեղծումը, ժողովրդական մասսաների դերի ճիշտ գնահատումը։ Նա նշում է, որ գրողը առաջինն էր սովետահայ գրականության մեջ, որ հիմք դրեց նոր հերոսի նկարագրության տրադիցիային («Դրադարանի աղջիկը», «Հեղկոմի նախագահը» և այլն)։ Սրանց հերոսները ոչ թե հին կյանքի, հին սկզբունքների հետ համակերպվողներ են, այլ այդ կյանքը վերափոխողներ, նոր կյանքի առաջամարտիկներ։ Նրանք ոչ թե «տխուր մարդկանց» նման խավարում խարխափող ու տանջվող արարածներ են, այլ հինը կործանող, պայքարի վճռականությամբ ու հերոսականությամբ լցված մարտիկներ։ Այդ գործերում խորը վերլուծության են ենթարկված գործողությունների զարգացման, կերպարների տիպական հանգամանքների ստեղծման գրողի վարպետությունը։

Պետք է նշել, որ քննարկվող աշխատության ոչ բոլոր գլուխները են հավասարազոր։ Օրինակ, գրքի վերջին մասում նկատվում է շտապողականության կնիքը։ Խորը և բազմակողմանի քննարկման չի ենթարկված «Պասլ թագավոր» պատմավեպը։ Համարյա ոչ մի խոսք չի ասվ-

ված Զորյանի հեքիաթների մասին, որոնք ոչ միայն լայն ժողովրդականություն են վայելում, այլև ունեն դաստիարակչական և ճանաչողական խոշոր նշանակություն։

Ամփոփելով մեր խոսքը, պետք է ասենք, որ Ս. Աղաբաբյանի «Ստեփան Զորյան» մենագրությունը հաջողված ուսումնասիրություն է, ուր փաստերի վրա հիմնված ընդհանրացումներն ու եզրակացությունները ճիշտ են բնորոշում գրողի տեղն ու դերը մեր գրականության պատմության մեջ։

Մենագրության հեղինակը կանգ է առել գրողի ստեղծագործությունների՝ նախկինում եղած գնահատականների ու կարծիքների վրա և նրանց հակադրել իր մեկնաբանություններն ու մտքերը, որոնք հիմնականում ճիշտ են։ Ներկա ուսումնասիրությունը մեծապես կօգնի մեր ընթերցասեր հասարակությանը հասկանալու և յուրացնելու սովետահայ արձակի ականավոր ներկայացուցիչներից մեկի՝ խոսքի վարպետ Ստեփան Զորյանի մեծ ու անգնահատելի ժառանգությունը։

Լ. ԱՄԱՏՈՒՆԻ